# ՎԱԶԳԵՆՅԱՆՑԻՆԵՐԻ «ԱՐԵՎԱԳԱԼԸ ԳԵՂԱՐԴՈՒՄ» ԼԱԶԵՐԱՅԻՆ ՍԿԱՎԱՌԱԿՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է «ԱՆՈՒՇ» ՄՐՑԱՆԱԿԻ



Լոս Անջելեսում կազմակերպվող Հայ երգի ամենամյա մրցույթում (Armenian Music Awards) հոգևոր երաժշտության այս փարվա լավագույն ալբոմ է ճանաչվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի «Լուսավորիչ» երգչախմբի «Արևագալը Գեղարդում» լազերային սկավառակը: Այսուհետ դպրանոցի սաներին իրենց հաղթանակի մասին մշտապես կհիշեցնի մրցանակաբաշխության գլխավոր պարգևը՝ «Անուշ» արձանիկը:

«Արևագալը Գեղարդում» սկավառակը «Լուսավորիչ»-ի երկրորդ ալբոմն է: Առաջինը Կոմիտասի «Պատարագ»-ն էր: Այս անգամ երգչախմբի կատարմամբ ձայնագրվել են Ներսես Շնորհալու Արևագալի ժամերգության երգերը, ինչպես նաև տարբեր տոների շարականներ: Շարականների ձայնագրությունն իրականացրել է Հայաստանի կոմպոզիտորների միության «Բրևիս» ձայնագրման ստուդիան:

Վազգենյան Հոգևոր Դպրանոցի եռաձայն երգչախումբը ստեղծվել է երկու տարի առաջ՝ դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանի անմիջական նախաձեռնությամբ: Գեղարվեստական ղեկավար Շոթա Վարդանյանի և դպրանոցի Ե լսարանի սան Արթուր սարկավագ Պետրոսյանի ղեկավարությամբ երգչախումբն այս տարի առաջին անգամ բարձրացել է նաև պրոֆեսիոնալ բեմ:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***